

# ՄԱՅԻՍ 28-Ի

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

## ՅՈՊՊԷԻ ՄԷՋ

(Սեփական քղրակցութիւն)

ՅՈՊՊԷ . 17 Յունիս

Հախառակ յոյճ զառնեբու ՅՈՅ  
տուած շկամուսեան եւ անոնց յա-  
րուցած զժուարութիւններու: Մայիս  
28-ի յառաջարկութիւնը անգր-  
ցաւ մասյս 4ին, առաւօտեան ժամը  
10ին, կաթողիկներու ակումբին մէջ:

Շուրջ 200ի մօտ երկօքս հաս-  
րակութիւն մը փութացեր էր իր յար-  
գանքի տարքը վճարելու այն բիւրա-  
ւոր նահատակներուն, որոնք զիտակ-  
ցական մահով կերտեցին Մայիս 28ը:  
Հայաստանի անկախութեան հոյակապ  
ապարանքին հիմնարկէքը:

Հանգէսին նախագահը, պ. Գրի-  
գոր Մարաշլեան, հետեւեալ խօսքերով  
հանգէսին բացուածը կատարեց.

«Ըստ աւանդութեան, մեր նախա-  
հայրը, Հայկ զիւցազն, շուղելով  
ենթարկուի Բէլի բանակալութեան  
և սանձարձակ քմահաճոյքին, լքեց իր  
տեղն ու հարստութիւնը, և գաղթեց  
որոնելու տեղ մը, ուր կրնար ազատ  
ու անկախ կեանք ապրիլ: Ան հիմնեց  
առաջին հայ գիւղը, որ իր անունով  
կոչուեցաւ Հայկաշէն: Ազատութեան  
և բանակալութեան պայքարը մարդ-  
կութեան շփոհն է: Եւ այս պայ-  
քարը գործեր տեւած է, և յաւէտ պիտի  
շարունակուի տարբեր գոյներով, եւ  
տարբեր երանգաւորումներով: Հպարտ  
ենք, որ մեր նախահայրը փոխանակ  
իր գլուխը խնարհեցնելու Բէլի բիրտ  
ու գաժան բանակալութեան առջեւ,  
նախամեծար համարած է մտէն զը-  
նով ազատ և անկախ ապրիլ: Այսպէս,  
կրնամ ըսել թէ, ազատութեան տեն-  
չանքը, ազատ կամքի անբռնարարե-  
լիութիւնը մեզի ժառանգութիւն մը-  
նացեր է մեր նախահորմէն:

Հայկաշէնը, իմ համագումով, հայ  
կական անկախութեան առաջին բունն  
է: Զարմանալի զուգագիպութեամբ  
մը Հայկաշէն կրթօտրոց Միւլթեան  
նախաձեռնութեամբ առաջին անգամ  
ըլլալով Յուպպէի մէջ կը տօնուի Մա-  
յիս 28ը, Հայաստանի անկախութեան  
թ. տարեգարձը:

Մայիս 28ը մեր գորաւոր երազ-  
ներու իրականացումի օրն է: Այս առ-  
նը գերազանցապէս ազգային տօն մըն  
է, և շի կրեր սեէ հատուածական և  
և կամ կուսակցական բնոյթ: Որով-  
հետեւ ընդհանուր հայութիւնը պզտիկ  
մուրհներով կռեր, կոփեր ու քանդա-  
կեր է իր անկախութեան հրաշագեղ

կաթաղբ:

Այս Մայիս 28ի խորհրդանիշը, մեր եռագոյնը, միայն երկու ասորի ծածանեցաւ Մասիսի վրայ, և հիւսիսէն ու հարաւէն փշոզ խոտաշունչ քամիները վար առին զայն անգթօրէն, Սակայն, վտառ ըլլանք, որ մեր հայրենիքի կրծքին վրայ գրուած երկու ասպանաքարերն ալ, վաղ թէ ուշ, պիտի վերնան ու մենք նորէն պիտի ըլլանք ազաւ և անկախ, պայմանաւ որ, անմար Տեան մեր սրտերուն մէջ ազատութեան երազն ու անկախութեան անշունքը, Սրբ այս ձգտումներէն ձեռք քաշենք, և երազելէ զազրինք, այն ասեմ կամոյին ինքնասպանութեան զիմած կ'ըլլանք, կ'ուզէ՞ք և անկասաղէս և ազգովին անձնասպան ըլլալ, Բնականաբար ոչ, Հետեւաբար Մայիս 28ի գաղափարականով ապրեցէք:

Նախագահին առաջարկով հանդիսականները երկու վայրկեան լռութիւն պահեցին յանկայս, ի յարգանք բիւրուար նահատակներուն, որոնք ողջակիզուեցան հայրենիքի զոհասեղանին վրայ, Մայիս 28ի ի խնդիր:

«Մեր Հայրենիք»-ով սկսու հանգէտը, Սրգերու ընթացքին պ. Բիւզանդ Այնթապիւան իր ջուր-կով, և պ. Յարութիւն Թիրեաքեան իր աստիղով կը մասնակցէին, Յասկապէտ պ. Բիւզանդ Այնթապիւանի նուազած եւրոպական կարերը հանդիսականները կը յուզէին, և ծափերու կ'արժանանային, 9. Վարդան Յակոբեան կարգաց Յաւաթարսի Մայիս 28ի նախընթաց խմբագրականներէն մէկը, պ. Սահակ Մինանեան արաստանեց Իստանպուլէն, և Հայաստանը, պ. Մանուէ Մարաշիւան Հէլլանիի աւանդութեան ոգին, և պ. Գէորգ Դարբինեան Հ.Շէմսի «Մայիս 28»-ը, Իւրաքանչիւր արաստանութիւն կը վերջանար բուռն ծափակարութիւններով, պ. Նիկողոս Նիկողոսեան իր բանաստեղծութեան ընթացքին՝ հանգամանօրէն վերլուծումի ենթարկեց 1917ի յեղաշրջումէն յետոյ ստեղծուած քաղաքական պայմանները, կանգ առաւ Անդրկովկասեան Սէյմի կազմութեան վրայ, և ցուցահանեց զայն բաղկացնող ազգերուն իրերամերժ եւ բոլորովին հակասեայ քաղաքական ձեռքառումներն ու վարքագիծը, «Հայաստանը, — ըսաւ յարգելի բանաստեղծը, հզնամամային վայրկեաններ կ'անցընէր, մէկ կողմէն թշուառութիւնն ուստի, վը, միւս կողմէն ալ թրջական հորդաներուն ներխուժումի վտանգը զամսակեան սուրբ պէս կախուած էին մեր հայրենիքին վրայ, եւ կը սպասնային հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան: Այս անսպասու պայմաններու տակ հայ ժողովուրդը վնաս պատուով մեանիլ, և իր անկախութեան արանալ, 9էաք է երախտա-

պարս ըլլանք անզուգական Արամի գործակիցներուն եւ Սարգսրապատի ու Ղարաքիլիսայի հակասամարանբուռն մէջ ինկած հազարաւոր հերոսներուն, որոնք վնասկան հարուած մը իջեցուցին մեր զարաւար ոստիկանութիւնը, սուրբ վնասկան մեր հարուածի սուգանութեան, փութաց հանչեալ ազաւ և անկախ ապրելու մեր իրաւունքը: Այսօրուան Հայաստանի հարազատ մայրը Մայիս 28ն է, Շտապ կուրանան այս բացայայտ իրողութիւնը, սակայն հաւատացէք որ վարչաձեւերը փոփոխական են և մենք պիտի տիրանանք մեր արդար և անկապակի իրաւունքներուն, պայմանաւ որ նոր սերունդը ընթանայ նահատակներուն բացած զոհարարութեան ուղին, Վերջին բանաբառն էր «Յուսարեքսի խմբագիր պ. Գուրգէն Միթարեան, որ խոսեցաւ աւելի քան մէկ ժամ:

Հանդէսը տեւեց ուղիղ երկու ժամ, և փակուեցաւ «Բամ Փարոտան»-ով:

Ժողովուրդը մեկնեցաւ խանդավառ ապաւորութիւններով, ՎԱՀԱԳՆ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

ԹՈՒՐԳ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՆԱՒՈՐՈՒՄԸ

Գաղթականներու տեղաւարումի անօրէն Մարաք պէլ, Կովկաս մեկնած է, Թիֆլիսի հիւպատոսին հետ խորհրդակցարար որոշելու համար Կովկասէն Թուրքիա փոխադրուելիք գաղթականներու թիւն ու փոխադրութեան եղանակը, Մոսկուայի և Կարսի գաղնադիրը որոշ արամագրութիւններ ունին այս փոխադրութեանց մասին, Կը կարծուի որ 50,000 աւելի պիտի ըլլայ սասնց թիւը, Վրաստանէն և Հայաստանէն է որ պիտի առնուին փոխադրուելիք թուրքերը:

ԲԱՂԱԲԱՅԻՆ ՕՐԷՆՔ

— Բաղաքային ամուսնութեան օրէնքին զործագրութեան զբաւելին վերջ, խառն ամուսնութիւններու թիւը զգալի կերպով շատցած է, Մասնաւորապէս Բերայի մէջ ուր հայեր, յայներ, հրէաներ և թուրքեր խառն կ'ապրին, խառն ամուսնութիւններու թիւը շփազանց շատցած է, Կարեւոր թիւ մը կը կազմեն թուրք երիտասարդները որոնք ամուսնացած են քրիստոնեայ աղջիկներու հետ, Իսկ ցարգ մէկ թուրք աղջիկ մը միայն ամուսնացած է քրիստոնեայի մը հետ, Կրօնակցութենէ աւելի հիմա կը փրձասուին ընկերային նպաստաւոր պայմաններ:

Բաղաքային օրէնքը սկսած է իր արդիւնքը ցոյց տալ: